օգնեա զըպարտելոյս, ով սուրբդ Ղուկաս.
տառապելոյս դու լեր։

Վարդապետ կոչեցյալ եւ փորձիմ պէսպէս,
չարագոյն կարնեցիք արարին հանդէս.
շեշտիւ ինձ ժամանեայ, ով սուրբ Յովհաննէս.
տառապելոյս դու լեր։

Արտասուելի ոմանք սրտիւ հրաբորբոք.
պատճառք եղեն անկմանս չարագոյն արք չորք.
փութապէս ժամանեայ, ով սուրբդ Գէորգ,
տառապելոյս դու լեր։

Բենիամես Խորայէլ, տուր ինձ յոյս տեւման,
մնանեցին զիս արք չորք յուդայանման.
սուրբ Յակոբ նահատակ, որդի Որոտման,
տառապելոյս դու լեր։

Դատապարտեցին զիս չարասէր արք չորս,
որպէս զՊոնտացին պիղծն Պիղատոս.
խաչեալ արքայդ իմ Աստուած, եւ Ցէր իմ Քրիստոս.
տառապելոյս դու լեր։

Անուն միոյն Գրիգոր չար եւ հանճարեղ,
եւ միւսոյն Պետրոս, դիմօքն տգեղ.
ով սուրբ կեսարացի սքանչելիդ Բարսեղ.
տառապելոյս դու լեր։

Պատուար մեր փրկութեան սուրբ Էջմիածին.
ընկալ զկարապետս, զորդիդ Ծոցածին.
զի գին եմք սուրբ արեան սոյնոյ Միածնին.
տառապելոյս դու լեր։

Երջանիկ վեհն մեր զՑէր Սիմէօն,
պահեայ անվտանգ կենօք, ով սուրբ նոր Սիոն.
զի է փեսայ Հարսինդ եւ մտօքն զգօն.
տառապելոյս դու լեր։